

NOV 2011

Մ. Ա.
ՄԱՅԻՐ



ՊԵՏՅՐԱՏ

894.362

Ա-12

894-362

Ա-12

Մ Ա Հ Վ Ա Ն 25 - Ա Մ Յ Ա Կ Ի Ա Ռ Թ Ի Վ

Մ. Ա. ՍԱԲԻՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիայի բնակչության պարզմանը վերաբերող

ՀԱՅՄԵՏՏՐԱՏ ● 1936 ● ՅԵՐԵՎԱՆ

25 JUL 2013

73.867

Պատ. խմբ. Էդ. Զոփուրյան
Սրբազրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավ. լիազոր Ս. 1166, Պատվեր 1196.
Հրատ. 3896, Տիբաժ 3000
Պետերատի տպարան, Յերևան,
11 Գնունի, 4



2457 74

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Միրզա Ալեքսեյ Սաբիր (առաջաբան)	7

ՅԵՐԳԵՐ ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅՈՒ ՄԱՍԻՆ

2. Բագվի բանվորներին	17
3. Քեզ մա՞րդ ես հաշվում	19
4. Ի՞նչ կանեյիր, ո՞վ աստված	21
5. Հողի մշակը	23
6. Փողը	25
7. Հողագործը	26
8. Բեյմեյմիլի	27

ՅԵՐԳԵՐ ՀԻՆ ԿԵՆՑԱՂԻ ՄԱՍԻՆ

9. Գանգատ	31
10. Թող չգա՛	33
11. Զե՛մ տա ուսման, ձե՛ռք քաշե՛ք	35
12. Ուսուցչական ժողովը	37
13. Հարց-պատասխան	39
14. Մամուլին և Համիդը	40

ԱՌԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. Խաբենդերն ու աղբառը	43
16. Ծառերի վերնը	44
17. Ծեր պարտիզանը	46
18. Նապեղինն ու գողը	47
19. Բժիշկն ու հիվանդը	48
20. Գյուղացին և հեղեղը	49
21. Մայրերի գարդը	50
22. Տղան և սառույցը	51
23. Դարման որերը	52



U. U. UGAR

Միրզա Ալեքսեյ Սարիրը ծնվել է 1862 թվին Շամախում, Ութ տարեկան հասակում մտել է քաղաքի թուրքական հոգևոր դպրոցը։ Ըստ սովորության, դեռ Ղուրանն անգիր սովորելը չվերջացրած՝ չէր թույլատրվում աշակերտներին գրելու վարժություններ անել։ Պատանի Սարիրը խախտում է այս որենքը, և մոլլան հրամայում է «ֆալսիկալի» կապել նրան։ Սարիրը 10—12 տարեկան հասակում փոխադրվում է Սեյիդ Ազիմ Շիրվանու դպրոցը։

Սեյիդ Ազիմ Շիրվանին իր ժամանակի Ազրեջանի խոշոր րանաստեղծներից էր, նա իր ուսումը առել էր Բաղդադում, Դամասկոսում և իսլամական այլ կենտրոններում, ճանապարհորդել էր Մեքքա, Մեդինա, Յեզիպատոս, Պոլիս և ուրիշ մեծ քաղաքներ։ Ապա վերադարձել Շամախի և այնտեղ բաց արել աշխարհական փոփոխ դպրոց, փորձեց բացի թուրքերենից և պարսկերենից, նա դասավանդում էր նաև ռուսաց լեզուն։ Սարիրն այս դպրոցում սովորեց մոտ յերկու տարի, սակայն առևտրական գործերի անհաջողության պատճառով նրա հայրը հանեց նրան դպրոցից՝ հակառակ Սարիրի ցանկություններին։

Հոր խանութում՝ պատանի Սարիրը չբաժանվեց իր սիրելի գրքերից և չխզեց իր կապը ուսուցիչ—բանաստեղծ Սեյիդ Ազիմից։ Նա իր գրած առաջին փոտանավորները հաճախ տանում էր նրա մոտ՝ սրճադրելու։ Այս հոգի վրա հոր և Սարիրի հարաբերությունները բարդացան։ Մի որ հայրը հարձակվելով վորդու վրա, վերցրեց նրա տետրը, խփեց գլխին և պատառոտելով դեն շարտեց։ Հոգով վիրավորված Սարիրը վճռեց հեռանալ քաղաքից և նույն օրն իսկ միանալով դեպի Բազու գնացող մի կարավանի՝ հեռացավ Շամախուց։ Բայց հայրը իմանալով իր վորդու այդ բայի մասին, հետևեց կարավանին և մի օրվա ճանապարհից վերադարձրեց նրան տուն։

Սարիրի այս բայը դրական հետևանք ունեցավ։ Հայրը վորոշ չափով հաշտվելով իր վորդու հակումներին հետ, չխանգարեց նրան գրադվել գրականությանը։ Մի քանի տարի հետո Սարիրն արդեն Շա-

ժախու հայտնի բանաստեղծներից եր. Նա ծանոթացավ իր ժամանակի գրողներին, մասնակցեց նրանց հավաքույթներին, վորի հետևանքով կապը հոր խանութի հետ աստիճանաբար թուլացավ: Հոր հետ մի հարկի տակ ապրելը Սարիբի համար այլևս անհնարին եր. Նա Խորասան ուխտի գնալու պատրվակով՝ 23 տարեկան հասակում հեռացավ տանից. մի քանի տարի շրջագայեց Թուրքեստանում, Պարսկաստանում, Թուրքմենստանում և Միջագետքում: Հոր մահվան լուրն առնելով, նա վերադարձավ Շամախի, վորտեղ ամուսնացավ և վերջնականապես հաստատվեց: Բազմանդամ ընտանիքի նյութական հոգսերն ստիպեցին նրան ոճառի պատրաստություն և առևտրով զբաղվել:

Շամախու հայտնի յերկրաշարժը, քիմիական ներկերի գյուտը, վորը գալիս եր արժեքագուրկ դարձնելու տեղական ներսի (տորոնի) առեկտուրը, մեծ հարված հասցրին քաղաքին: Բազմի վրայով կառուցվող յերկաթուղին զրկեց քաղաքն իր նախկին առևտրական նշանակությունից: Շամախու անկման խնդրում ավելի մեծ դեր խաղաց Բագվում յավթարդյունաբերության զարգացումը և նահանգային կենտրոնի Շամախուց Բագու փոխադրվելը: Անխուսափելի անկման յենթարկված քաղաքում Սարիբի համար յկար առաջադիմություն վոչ մո հեռանկար:

Շամախին հանդիսանում եր այդ շրջանում Թուրք ուսուցիչին հոգեվորականության միջնաբերդը, վորտեղ ցարական չինովնիկների բյուրոկրատիան դաշն կոած յերկրի հետադիմական տարրերի հետ, ճնշում և հալածում եր ամեն մի քիչ թե շատ առաջավոր շարժում: Սարիբի համար չափազանց դժվար եր այս պայմաններում ազատորեն արտահայտել իր մտքերը, վորոնք նկատելիորեն ստանում եյին առաջավոր րնույթ, յցվում բողոքով ընդդեմ տիրող խավարի և դժման բարբերի: Նրա աշխարհահայացքի մեջ առաջ եր յեկել մի շրջադարձ, վորը տանում եր նրան դեպի դեմոկրատական, ժողովրդասիրական գաղափարներ:

Սարիբի առաջին փոտանավորները, վորոնք գրված եյին առաջադիմական փողովի, լույլ տեսան Ազրբեյջանի սահմաններից դուրս, Թիֆլիսում (Թբիլիսի) հրատարակվող «Շարքի Ռուս» թերթում:

Սակայն վճռական ընկումը Սարիբի աշխարհահայացքի մեջ տեղի ունեցավ 1905 թվի հեղափոխության շրջանում: Ռուսաստանում և Անգլիայում կատարված սկսված հեղափոխական բուռն վերելքը նոր հորիզոններ եր բաց անում ցարերի և հոգևորականության, խաների, բեկերի և կապիտալիստների կրոնիկների տակ ճգնված Թուրք աշխատավորության համար: Այդ մասսաների ձգտումների արտահայտիչն և հանդիսանում Սարիբը, վորը 1905 թվին «Հայաթ» (կյանք) թերթում հանդես ե գալիս հայ—Թուրքական կոտորածների դեմ, վորոնք հրահրվում եյին ցարիցի կողմից, և դատապարտում ազգամիջյան թշնամությունը:

1905 թվի հուլիսին հրատարակվում ե Սարիբի «Բեյնեմիլի»

(միջազգային) բանաստեղծությունը, վորով նա կոչ եր անում յերկու յեղբայր ժողովուրդներին՝ դադարեցնել թշնամությունները:

... Յերը վոր հիմա, մեր դարում, պետե ե լինել միարան, Լինել յեղբայր, ունենալ մի նպատակ սրբազան, Յերը վոր չկա լուրջ պատճառ Թուրք ու հայի դժտություն՝ Ինչո՞ւ համար ենք դարձել թշնամիներ մենք դժման: Հայրենիքի, նույն հողի դավալենք ենք վաղուց մենք. Ձկա՞ մեկը, վոր այսոք ուղիղ ճամբան ցույց տար մեդ: Պերճախոսներ, յեկե՛ք հանդես, յեղբայրություն խո՛սք թող հնչի, Վոր լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի:

Յերկու ընկեր՝ հարեման, հայրենիքում յերկրակից, Վոր դարերով աշխատել՝ միշտ յեղել ենք բախտակից, Արտ ենք ջրել, ջուր խմել նույն գետերից, աղբյուրից... Այսոք հանկարծ իրար դեմ սուր ենք հանում պատյանից... Տգիտություն, իրիսի մասն ե այստեղ խառնակիչ:— Գյուղ ու քաղաք ավերակ՝ դարձան արյան կարմիր լիճ: Պերճախոսներ, յեկե՛ք հանդես, յեղբայրություն խո՛սք թող հնչի, Վոր լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի:

1905 թվի հեղափոխության ազդեցության տակ Ազրբեյջանի Թուրք հասարակության մեջ ծնունդ ե առնում մանր բուրժուական դեմոկրատական շարժումը, վորի ներկայացուցիչն և հանդիսանում 1906 թվից հրատարակվող «Մուլա Նասրեդին» հանդեսը, և վորի շուրջը համախմբվում են ժամանակի առաջավոր Թուրք գրողները: Այս յերդիծաթերթը, վորի խմբագիրն եր Ջելիլ Մեհմեդ Կուլին, պայքար եր մեղում հոգևորականության, հին խավար ու մռայլ կենցաղի և սովորությունների դեմ ու քարոզում եր ժողովրդական լուսավորություն: Սարիբը դառնում և այս յերդիծաթերթի ամենախեղճանդուն աշխատակիցը: Այս հանդեսին աշխատակցում եյին ռուսական կրթություն ստացած, ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված յերիտասարդ գրողները: Սարիբի համար «Մուլա Նասրեդինը» դարձավ այն որդանը, վոր հնարավորություններ տալիս նրան ազատորեն արտահայտելու իր մտքերը, պայքարելու հոգևորականների, հարուստների և ճնշող կարգերի դեմ, պաշտպան կանգնելու աշխատավոր տարրերի՝ բանվորին ու գյուղացուն: Յերդիծաթերթի նոր դեմոկրատական ուղղությունը, լայն մասսաներին մատչելի և հասկանալի լեզուն՝ մի չպարոց հանդիսացավ

Մաքիերի համար նա իր յերգիծական սուր վոտանավորներով, ֆելյետոններով ու պամֆլետներով դարձավ ընթերցողների համար ամենասիրելի, ժողովրդական բանաստեղծը։ Մաքիերի անունը հռչակվեց և տարածվեց Ադրբեջանի սահմաններից դուրս, ամբողջ Անդրկովկասի թուրք ընթերցողների շրջանում, մինչև իսկ թուրքեստանում և Իրանում։ Մաքիերի «Հոփ-Հոփ» կեղծանունով տպված յերգիծական խալթող վոտանավորները կատարի ատելութամբ լցրին մոլեռանդ հոգևորականներին և բեկերին։ Իր հայրենի քաղաքի միջավայրն անտանելի դարձավ նրա համար, նույնիսկ նրա կյանքը միշտ յենթակա յեր վտանգի։

Շամախու հոգևորականութունն ու մոլեռանդ, հետադիմական տարրերը չեյին կարող հաշտվել այն մտքի հետ, վոր Մաքիերը՝ «Հոփ-Հոփը»՝ քննադատի և խայտառակի հին կենցաղը, աղաթը, ծաղրի կրոնն ու կրոնականներին, հեզնի բեկերին ու վաճառականներին։ Շամախում նրա թշնամիները բազմացան և քաղաքի ախուզը սլաշտնապես նրան անաստված հայտարարելով՝ հորդորում եր հասարակութանը՝ չբարեկե Մաքիերին, առևտուր չանել նրա հետ, նույնիսկ թույլ չտալ բաղնիքում լողանալ, ասելով, վոր նա պիղծ ե։

Շնորհիվ այդ հալածանքի՝ Մաքիերի ոճառի առևտուրն անհաջողութան մատնվեց։ 1907 թվից լուծարել յենթարկելով իր խանութը և յերեք տարի անգործ թափառելուց հետո, 1910 թվին նրան հաջողվեց ուսուցչական պաշտոն ձեռք բերել Բազվում։ Նոր միջավայրը նրան վողեւորում եր։ Ուսուցչական աշխատանքի հետ միասին նա կանոնավոր մասնակցում եր «Մոլլա Նասրեդդին»-ին և նույն ժամանակ Բազվում հրատարակվող «Գյունեշ» (Արև) և «Մալումաթ» («Տեղեկատու») թերթերին։

Նյութական ծանր պայմաններն ու աշխատանքը քայքայեցին բանաստեղծ յերգիծարանի առողջութունը։ 1911 թվին Մաքիերը հիվանդացավ և Բազվից մեկնեց Շամախի՝ իր ընտանիքի մոտ։ Շամախում նրա հիվանդութունն ավելի սաստկացավ, վորից հետո գնաց թիֆլիս բժշկվելու, սակայն ապարդյուն։ Վերադառնալով Շամախի, 1911 թվի հուլիս 25-ին, հիսուն տարեկան հասակում, մահացավ Ադրբեջանի խոշորագույն ժողովրդական բանաստեղծը։

Մաքիերն ըստ արժանավուն գնահատվեց միայն իր մահից վերջ, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո։ Նրա ժողովրդասիրական կրահոտ քարոզը, դեմոկրատական վողին, պայքարը աղաների, հոգևորականների և տիրող խալար կարգերի դեմ՝ նրան դարձրին Ադրբեջանի գրականության խոճարագույն կլասիկներից մեկը, ժողովրդական բանաստեղծ յեկ յերգիծարան։ Նրա բողած գրական ժառանգությունը պահպանում ե Ադրբեջանի աշխատավոր մասսաներին։ Դրա համար ել Բազվում կանգնած ե նրա ուշադրավ արձանը և բազմաթիվ հիմնարկներ ու դպրոցներ կոչված են նրա անունով։

Նրա դերը շատ մեծ ե յեղել Ադրբեջանի նոր գրականության և լեզվի զարգացման մեջ, նա սեղծեց գրական նոր ուղղություն յեկ դպրոց

այն մասսաներին հասկանալի յեկ սիրելի գրականություն, Վորպես ուսուցիչ յեկ լուսավորիչ նա խոճոր դեռ ե կասաբել նայել ժողովրդական կրթության ասպարեզում։ Նա պայքարել ե, ազատագրելու համար դպրոցը մոլլաների և Ղուրանի ազդեցութունից, պայքարել ե հանուն կանանց դաստիարակության և ազատագրման։

Մերկացնելով հարուստների, խաների ու բեկերի հետադիմական և զարչելի դեմքը, նա մեծ չափով նպաստել ե ժողովրդական լայն մասսաների ազատագրական պայքարին, բուրժուազիայի և կալվածատերերի դեմ։

Ճշմարիտ ե, Մաքիերը ինչպես և «Մոլլա Նասրեդդին» յերգիծութեթի շուրջը համախմբված առաջավոր գրողները չեն գիտակցել դասակարգային պայքարի դերը, չեն կարողացել կանգնել դեպի աշխատավոր մասսաներն իսկական ազատագրութունը տանող ուղիների վրա, նրանք յեղել են զլխավորապես բողոքող — լուսավորիչներ, դեմոկրատական — հումանիտար զաղափարներով տողողված մարդիկ, սակայն և այնպես ժամանակի տիրող կարգերում, լայն մասսաների ճնշվածութան և մոլեռանդ թուրք հոգևորականութան տիրապետութան պայմաններում նրանց կատարած դերը նշանակալից և մեծ ե յեղել։

Մաքիերի նշանավոր գործն ե «Հոփ-Հոփ Նամե» գերքը, վորը մեջ ամփոփված են նրա լավագույն յերկերը։ Այդ գերքը Ադրբեջանի զբրականութան ամենասիրված յերկերից մեկն ե, վորը արժանացել ե մի քանի հրատարակության։ Կարդալով այդ գերքը, նրա մեջ ամփոփված սրամիտ, խալթող բանաստեղծութունները՝ չի կարելի հարգանքով և հիացմունքով չլցվել դեպի նրանց հեղինակը, վորն իր ամբողջ կյանքում կրել ե լոկ զրկանքներ, հալածվել շարունակ, աշխատել ե խալարամիտների և կատարի թշնամիների ստեղծած դժվարին պայմաններում։ Այդ պայմաններում չափազանց դժվար եր հանդուգն խոսք ասել կրոնի և հոգևորականների դեմ, վորոնց մոլեռանդութունը հասնում եր անասելի չափերի։ Այնինչ Մաքիերը գրում ե այնպիսի տողեր, վոր միայն կարող եր գրել հին և ճնշող տրադիցիաների դեմ վճռականորեն վոտել յեկած լուսավորիչը։ Չնայած բոլոր հալածանքներին և զրկանքներին՝ Մաքիերը շարունակել ե իր պայքարի ուղին, բնավ չհրապուրվելով հարուստ, կալվածատեր բեկերի և Բազվի միլիոնատեր թաղիկների գովերգուն դառնալու հեռանկարից։ Նա յերքեր չի մտածել իր սկզբունքները զոհելու գնով իր համար ապահով կյանք ստեղծելու մասին։ Ընդհակառակը, նա սուր և անողոր կերպով ծաղրում ե նրանց, մերկացնելով նրանց շահագործողական եյուղյունը։

Հղիացած կապիտալիստը՝ գիմելով բանվորին ցինիկորեն ասում ե.

Մարդ ասածդ աստիճանով պետք ե լինի,
նա մեծատուն, կալվածատեր պետք ե լինի,

Շքեղ տան տեր և բարձրանճեն պետք է լինի:
Բո խրճիթը ապարանք ես արդյոք հաշվում եմ,
Այ դու տխմար, մարդ լինելը հեշտ ես կարծում եմ:

... Փողը մե՛րն ե, փառքն ու պատիվ նաև մե՛րն ե,
Հողը մե՛րն ե, նահանգը մե՛ր, յերկիրն մե՛րն ե,
Իշխանութուն, դատ ու դիվան— բոլորն մե՛րն ե:
Ամեն մարդու միթե՞ դու խան, բեկ ես հաշվում,
Այ դու տխմար, մարդ լինելը հեշտ ես կարծում:

Նույն ձևով և տոնով կալվածատեր բեկը դիմելով աշխատավոր
գյուղացուն («Հողի մշակը») ասում ե.

Թե վոր կարկուտն անգութ յեղավ, տարավ ինչքըդ, յես
ի՞նչ անեմ,
Թե վոր մորեխն անխիղճ կերավ քո բոստանը յես ի՞նչ անեմ,
Թե պարտքիդ դեմն՝ անցյալ տարի վերմակդ առա, յես ի՞նչ
անեմ:

Հիմի արդեն պատրաստ յեղիր՝ փայտդ ծախել, հողի մշակ,
Լաց մի լինի, համբը յեղիր, աչքըդ փակիր, հողի մշակ:

Դու մի ասի շատ եմ տքնել, քիչ ստացել, սոված եմ յես,
Դրողի ծնց, թե քաղցած ես ու կիսամերկ թափառում ես,
Աչքդ դուրս գա՝ պետք է ճարես դու իմ ցորենն, այ չաներես:
Գարի՝ տուր ինձ, ցորեն տուր ինձ, չալթնակ տուր ինձ,
հողի մշակ,
Թե չե կաշիդ տկի նման յես կհանեմ, հողի մշակ:

Այս յերգիծական վոտանավորներն իրենց բովանդակությամբ և
պարզ ձևով հասկանալի յեն յայն մասսաներին: Սարիբը հատկապես
դիմում է վոտանավոր - ֆելյետոնի այդ ձևին, վորովհետև այդ հնա-
րավորութունն է տալիս նրան խտացնել գույները, ավելի ցայտուն
դարձնել հիմնական դադափարը և անմիջականորեն ազդել ընթերցող-
ների վրա: Նա հանդես է բերում իրեն՝ կապիտալիստին և կալվածա-
տերերին ու իրենց իսկ սեփական խոսքերով պատում նրանց դիմակը:
Նույնպիսի խայթող ծաղրով Սարիբը խոսում է հին կենցաղի
բացասական յերևույթների մասին, խարաղանում է այն դաժան բար-
քերը, վորոնց պայմաններում թուրք կինը լոկ սորուկ եր իր ամուս-
նու համար: «Գանգատ» վոտանավորում Սարիբը յերգիծական նույն
գույներով հանդես է բերում բաղմանությունից մայրենի սովորութու-
նը՝ կառչած ամուսնուն, վորն «անկեղծորեն» գանգատվում է իր կնոջից:

...«Լուսաքավ՝ վե՛ր կաց դու, հաց թխի, կով կթի,
Խնոցի շուտ հարի,— անհավատի ա՛յ աղջիկ:

Շոր լվա, բուրդ գդի, թոկ հյուսի, սառ ջուր բեր,
Ու աթար թխի լավ,— անհավատի ա՛յ աղջիկ:

Արթուն կաց, խոնարհ կաց, գործիդ կաց դու միայն,
Տուն մաքրի, աշխատի,— անհավատի ա՛յ աղջիկ:

Բո ի՞նչ գործ, թե քո մարդն առնում է մի նոր կին,
Յեղիր դու հնազանդ,— անհավատի ա՛յ աղջիկ:

Տղամարդն ինք գիտի, թե քանի կին պետք է
Նա առնի, կամ թողնի,— անհավատի ա՛յ աղջիկ:

Իր առականների և այլ բանաստեղծութունների մեջ Սարիբը
նույնպես հանդես է գալիս վորպես առաջադիմական, նա ջատագովում
է ազնիվ աշխատանքը, հեղնում և ծաղրում է ձրիակերներին և բռնա-
կալ արքաներին:

... — Թագավոր ապրած, միթե այդքան թույլ

Խեղճ ու անգոր է քո իշխանութուն.
«Խնդրիր այն, ասիւր, ինչ սիրտդ կուզի,
Բո ցավը պատմիր դարմանեմ հիմի»,
Մինչդեռ տեսնում եմ, թշվառ ես տկար—
Նույնիսկ ճանճերին հաղթելու համար:
Յեթե այդքան ուժ անգամ դու հունես՝
Ի՞նչ խնդրեմ քեզնից, ինչպես ինձ ոգնես...
(«Իսքենդերն ու աղքատը»)

Սարիբն իր գրական ժառանգությամբ այժմ դարձել է Ադրբե-
ջանի աշխատավոր ժողովրդի սեփականութունը: Նրա մահվան 25-ա-
մյակը հանդիսանում է սոցիալիստական յերջանիկ կյանք կառուցող
թուրք լայն մասսաների և անդրկովկասյան մյուս բոլոր յեղբայրական
ժողովուրդների մեծաբանքի և յերախտագիտության արտահայտութու-
նը: Վորպես անդրկովկասյան ժողովուրդների յեղբայրության ջատա-
գով և մարտիկ՝ Սարիբը հանդիսանում է անցյալի այն պայծառ դեմ-
քերից մեկը, վորոնց անունը սիրով կհիշեն սերունդները և վորոնց
գրական մեծարժեք ժառանգութունը կմնա մեր սոցիալիստական կուլ-
տուրայի վոսկյա ֆոնդում:

ՎԵՍՊՊԵՐ

ՅԵՐԳԵՐ ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՄԱՍԻՆ

ԲԱԳՎԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ ե յեկել հիմի,
Ու բանվորն ել, մի տե՛ս, մարդամեջ ե մտել հիմի:

Ինչո՞ւ պիտի ամեն գործին խառնվի բանվորն,
Հարուստների առաջ հանդուգն լինի բանվորն,
Ու շունչ փաշի հանգիստ՝ իրավագուրկ բանվորն,
Կամ իր դատի համար պայքար մըղի բանվորն:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ ե յեկել հիմի,
Ու բանվորն ել, մի տե՛ս, մարդամեջ ե մտել հիմի:

Բանվոր, ասա՛ դու ինձ, ինչո՞ւ պատիվ տան քեզ,
Ինչո՞ւ ազատ խոսքի լայն իրավունք տան քեզ,
Հարուստ մարդկանց բոլոր՝ խոնարհ ծառան դարձիր,
Յեվ ի՛նչ նրանք տան քեզ՝ գոհ և ուրախ յեղիր:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ ե յեկել հիմի,
Ու բանվորն ել, մի տե՛ս, մարդամեջ ե մտել հիմի:

Հարուստը միշտ փորձանք ու վտանգ ե, գիտե՞ս.
Բանվոր մարդու արդար խոսքը արա անոնս,
Աղքատ մարդկանց՝ յերես մի՛ տար, լի՛ր նրանց,
Պատիվ, անունը՝ բարձր պահիր նրանց դիմաց:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ ե յեկել հիմի,
Ու բանվորն ել, մի տե՛ս, մարդամեջ ե մտել հիմի:



Բանվորն անխելք է միշտ, և անշնորհք, անուս,
Չունի հագին քեզ պես քանկ ու մաքուր հագուստ,
Չունի վոսկի, արծաթ, չունի նա շալ, արա,
Մի հին չուխա ունի, մի հնամաշ կաքա:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ է յեկել հիմի,
Ու բանվորն էլ, մի տե՛ս, մարդամեջ է մտել հիմի:

Թե ուզում ես հանգիստ դու աշխարհում ապրել,
Թե ուզում ես վայելք ու նոր խնդում տեսնել՝
Բանվոր մարդուց հեռու, հեռո՛ւ փախիր դու միշտ,
Շահքդ փնտռիր միայն, և վո՛չ կսկիծ ու վիշտ:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ է յեկել հիմի,
Ու բանվորն էլ, մի տե՛ս, մարդամեջ է մտել հիմի:

Հիշիր ցավը ազգիդ՝ դարման մի՛ անի բայց,
Ու մի՛ գթա վորքին՝ փողոցներում ընկած,
Դու քո մասին հոգա, դո՛ւ յես միայն անցին,
Ու մոռացիր բոլոր, բոլոր մարդկանց կրկին:
Բախտի անիվը մեր՝ շո՛ւռ է յեկել հիմի,
Ու բանվորն էլ, մի տե՛ս, մարդամեջ է մտել հիմի:

7 ապրիլի, 1906

ՔԵԶ ՄԱՐԴ ԵՍ ՀԱՇՎՈՒՄ

Անփող բանվոր, մի՞թե դու քեզ մարդ ես հաշվում,
Մարդ լինելը մի՞թե այդքան հեշտ ես կարծում:

Մարդ ասածըդ աստիճանով պետք է լինի,
Նա մեծատուն, կալվածատե՛ր պետք է լինի,
Շքեղ տան տեր և բարձրանո՛ւն պետք է լինի:
Քո խրնիքը ապարա՞նք ես արդյոք հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Մի շտապի մեծամեծաց ժողովներին,
Վոտիք դու կաց, մի՛ խանգարի իշխաններին,
Զբաղոր ես՝ մի խառնվի նրանց գործին:
Դու հարուստին հար-հավասա՞ր ես քեզ հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Ո՞վ ստեղծեց հավասար՝ քեզ և հարուստին,
Զեր միջև, տե՛ս, անդունդ կա մեծ ու անագին,
Զկա՛ տաղանդ առանց փողի որհնյալ ուժին:
Անկարելին կարելի՞ յես միթե հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Վեր առ մուրնըդ և աշխատիր քո սահմանում,
Նպատակըդ յերազ է լոկ ամեն բանում,
Նման չես դու հարուստ մարդուն մեր այս կյանքում:
Աշխատավարձ արասիդ՝ միլիոն ես հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Փողը մերն է, փետֆն ու պատիվ նաև մերն է,
Հողը մերն է, նահանգը մեր, յերկիրն մերն է,
Իշխանութիւն, դատ ու դիվան—բոլորն մերն է:
Ամեն մարդու միջքէ դու խան, բեկ ես հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Մեր հովանու ներքե, յերբ խաղաղ ե՛ք ապրում,
Ապստամբվելը դուք բարի՞ք ե՛ք համարում,
Ա՞յս է հիմա ձեր պարգևած լավ հատուցումն:
Մեր շնորհած քուֆն ու մուրը դու բա՞ն ես հաշվում,
Ա՛յ դու տխմար, մարդ լինելը հե՞շտ ես կարծում:

Վոչ ամաչում, վոչ ել ճանճրանում ես դու,
Շնորհիվ աստծո՝
Հրում բորբոքում՝ այրվո՛ւմ ես դու:

25 մայիսի, 1907

Ի՞նչ ԿԱՆԵՅԻՐ, Ո՛վ ԱՍՏՎԱԾ...

Ինչի՞դ եր պետք, ի՞նչ կանեյիր քաղ-սիրտ մարդկանց, ո՛վ
աստված...
Ինչո՞ւ համար սառը արյուն ու սառը սիրտ, ո՛վ աստված...

Թե ժողովուրդն է տանում միշտ հազար-հազար տառապանք՝
Այսօր տանջանք կրողներին ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Այն ժամանակ, յերբ վոր չկա վստահութիւն ու խնդում,
Մեր այս դարն ու ժամանակը ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Յեթե խեղճի արտասուքը դառնալու յեր անհուն ծով,
Անծիր ծովերն ու ովկիանոսն ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Թե վորսկանը վորսի ժամին անգութ եր միշտ ու անխիղճ՝
Յեղճիկները, յերեները ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Արտի, այգու բերքն ու բարին յեթե բեկը պիտ լափեր՝
Այսօր մշակ ու սերմնացան ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Թե աշխատանքն է գյուղացուն, ուժը յեզան, հողը քոն՝
Այսօր խաներ ու բեկզաղա ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Տգիտութեան սև խավարը քե աշխարհը կպատեր՝
Գիտնականին, գրասերին ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Սյուրսուկավոր մշուսումանը քե նախատինք պիտ կրեր՝
Դոշտիկավոր մշուսումանը ի՞նչ կանեյիր, ո՛վ աստված...

Յեքե այսֆան մեծ իրավունք հին մարդկանցը կլինեք՝
Այս մի քանի բանագեսը ի՞նչ կանեյիր, ո՞վ աստված...

Յեքե գործը կարող եյին լրտեսները կատարել՝
Ծույլ ու խեղճուկ շեյքաններին ի՞նչ կանեյիր, ո՞վ աստված...

Թե տղամարդը տղային ինչպես մի կին պիտ սիրեր՝
Այսֆան կանայք տանն ըսպասող՝ ի՞նչ կանեյիր, ո՞վ աստված...

Իսկ քե ամեն վաճառական մի Սոնիչկա կնարեք՝
Այսֆան դժբախտ Թյուֆեզբաններն ի՞նչ կանեյիր, ո՞վ աստված...

Փա՛ռք քեզ աստված, փա՛ռք քեզ աստված, փա՛ռք քեզ աստված
վոզորմած,
Իմաստությունըդ տեսնելով՝ մնում եմ յես հիացած...

Հ Ո Ղ Ի Մ Շ Ա Կ Ը

Բավական ե ինչֆան հեծես ու հեծեծես, հողի՛ մշակ,
Դու աներես ու խորամանկ մի աղվես ես, հողի՛ մշակ:

Փուն պատմառով և ամեն որ մի՛ կանգնի դու իմ դռանը,
Շլինքըդ ծուռ, աղֆատի պես, մի՛ պաղատի իմ դռանը,
Մեկ չոր գլխիդ ու մեկ կրծքիդ մի՛ խփի դու, իմ դռանը:
Զուր մի՛ մեռնի, շնորհիք հուսա այս տանից դու, հողի՛ մշակ,
Լաց մի՛ լինի, համբըր յեղիր իմ դռանը, հողի՛ մշակ:

Տարին վատ եր, անջրդի յեր, անապատ եր, յես ի՞նչ անեմ.
Անձրև չեկավ, արտում-ափում հատիկ չեղավ, յես ի՞նչ անեմ,
Խորշակը սև՝ փչեց-տարավ բոստան-պարտեզ, յես ի՞նչ անեմ:
Յեվ ի՞նչ անեմ, վոր քրտինքըդ գուր տեղ՝ քափվեց, հողի՛ մշակ,
Անհամ-անհոտ քո խոսքերով մի՛ պաղատի, հողի՛ մշակ:

Թե վոր կարկուտն անգութ յեղավ, տարավ ինչքըդ, յես ի՞նչ
անեմ,
Թե վոր մորեխն անխիղճ կերպով քո բոստանը, յես ի՞նչ անեմ,
Թե պարտիդ դեմն՝ անցյալ տարի վերմակդ առա, յես ի՞նչ անեմ:
Հիմի արդեն պատրաստ յեղիր՝ փալատդ ծախել, հողի՛ մշակ,
Լաց մի՛ լինի, համբըր յեղիր, աչքըդ փակիր, հողի՛ մշակ:

Դու մի՛ ասի շատ եմ տֆնել, քիչ ստացել, սոված եմ յես,
Գրողի ծո՛ց, քե ֆաղցած ես ու կիսամերկ քափառում ես,
Աչքըդ դուրս գա՝ պետք ե ֆարես դու իմ ցորենն, ա՛յ աներես:
Գարի՛ տուր ինձ, ցորեն՛ն տուր ինձ, չալքո՛ւկ տուր ինձ,
հողի՛ մշակ,
Թե չե կաշիդ տկի նման յես կհանեմ, հողի՛ մշակ:

Ջուր մի՛ ասի վոչինչ չունեմ, ինչպես հոգիդ՝ պարտքդ կառնեմ,
Ալլա՛հ վկա, քո լաց յեղով աչքերից՝ այն յես կհանեմ:

Մտրակի համն իմացե՞լ ես, կնաշակես՝ հետո՛ կառնեմ:

Գլխիդ գալիք դու միտըդ բեր ու լա՛վ հիշիր, հողի՛ մշակ,
Քո խոսքերով անհամ-անհոտ՝ մի՛ գանգատվի, հողի՛ մշակ:

Գուքան ունես... ցորենն ի՛նձ տուր, մի՛ մտածի, կորե՛կ
կուտես,

Թե ջուր չեղավ՝ ձմեռը ձյունն կըհալեցնես ու կը խմես,
Քարից կակուղ բե թույն չեղավ՝ մի՛ վախենա, դու ո՛ճ կուտես:

Այս աշխարհում չե՛ս սովորել յուղ ու մսի, հողի՛ մշակ,
Ինչպես անբան, խեղճ անասուն կյանք ես վարել, հողի՛ մշակ:

Իսկ յես, վորպես մարդ եմ ապրում, ունեմ պատիվ ու մեծ շքան,
Բեկդադա՛ յեմ, հարգը գիտեմ յես լավ կյանքի, հանգստության,
Առանց գինու ու համեմի չե՛մ բանա յես իմ նոխ սեղան:

Այդպե՛ս եմ յես, հարո՛ւստ եմ յես ու բե՛կ եմ յես, հողի՛ մշակ,
Ինձ նմանի պատկերն ա՛յս ե, լա՛վ իմացիր, հողի՛ մշակ:

24 հուլիսի, 1907 թ.

Փ Ո Ղ Ը

Մարդուն մարդ դարձնողը փո՛ղն ե միշտ,
Անփող մարդու յերեսը սե՛վ ե միշտ:

Թող վոչ քո ցեղն ազնիվ լինի,
Վոչ ել ինքըդ ազնիվ լինես,
Անունդ սևով լինի գրված,
Միայն բե դու հարուստ լինես:

Մարդուն մարդ դարձնողը փո՛ղն ե միշտ,
Անփող մարդու յերեսը սե՛վ ե միշտ:

Անկարող ու անխելք յեղիր,
Միայն կաված, հող ունեցիր,
Ծունկի կգան հողիդ վրա
Շատ հիմարներ, վստա՛հ յեղիր:

Մարդուն մարդ դարձնողը փո՛ղն ե միշտ,
Անփող մարդու յերեսը սե՛վ ե միշտ:

Թող քո ներսում խիղճ չլինի.
Ծծես արյունն աշխատողի,
Բայց գրպանումդ բե լինի փող—
Դու մարդ ես միշտ յերեսի:

Մարդուն մարդ դարձնողը փո՛ղն ե միշտ,
Անփող մարդու յերեսը սե՛վ ե միշտ:

ՀՈՂԱԴՈՐԾԸ

Արևն յեկավ՝ ցրե՛ց աշխարհը լույսով,
 Քշե՛ց հողվորն արուում արորն ազմուկով.
 Ձիեր, յեզներն ո՛ւժ են տալիս գուքանին.
 Մերք փաշում են, մերք ընկնում են, ու կրկի՛ն
 վառփի յեկնում խրիսնջալով, բառաչով:
 Հո՛ղն է հերկում մշակն ահա տանջանքով,
 Քրտնաքաքալս և խանձրված՝ դաշտերում,
 Յեվ արտերը ակոսներով զարդարում:
 Սակայն ինչքան նա տփնում է շարունակ՝
 Լարարում է յեռանդն այնքան՝ կրծփ տակ.
 Յեվ նա գիտե, վոր իր հանգիստն իրական՝
 Աշխատանքից վերջն է միայն դյուքակա՞ն:
 Ու ամեն ժամ հողի, ջրի հետ է նա,
 Վոր խոր ճմռան՝ մառանում հաց ունենա,
 Հավաքելով դաշտում հատիկը վերջի՞ն՝
 Կերակրի նա իր ընտանիքն ահագին:

ԲԵՅՆԵԼՄԻԼԵԼ*)

ՀԱՅ ՅԵՎ ԹՈՒՐԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆԵ

Յերբ վոր հիմա, մեր դարում, պետք է լինել միաբան,
 Լինել յեղբայր, ունենալ մի նպատակ սրբազան,
 Յերբ վոր չկա լուրջ պատճառ քուրք ու հայի գժտությամբ՝
 Ինչո՞ւ համար ենք դարձել քշմամիներ մենք դաժամ:
 Հայրենիքի, նույն հողի զավակներն ենք վաղուց մենք.
 Զկա՞ մեկը, վոր այստեղ ուղիղ մամբա ցույց տար մեզ:
 Պերնախոսներ, յեկեք հանդես, յեղբայրության խոսք քող հնչի,
 Վոր լինենք հաշտ ու մտերիմ, քշմամիությունն անդարձ կորչի՛:

Յերկու ընկեր՝ հարևան, հայրենիքում յերկրակից,
 Վոր դարերով աշխատել՝ միշտ յեղել ենք բախտակից,
 Արտ ենք ջրել, ջուր խմել նույն գետերից, աղբյուրից՝
 Այստեղ հանկարծ իրար դեմ սուր ենք հանում պատյանից...
 Տգիտության, իրիսի**) մա՛տն է այստեղ խառնակիչ,—
 Դյուղ ու փաղափ ավերակ՝ դարձան արյան կարմիր լին:
 Պերնախոսներ, յեկեք հանդես, յեղբայրության խոսք քող հնչի,
 Վոր լինենք հաշտ ու մտերիմ, քշմամիությունն անդարձ կորչի՛:

Այսօր վորում ո՞վ ցանեց և ո՞վ նյութեց այսօր դավ,
 Ո՛ր, ինչպիսի՞ փոքորիկ մեր շուրջն ահա բարձրացավ.
 Մարդասերներ չեն նրանք, վորոնք դարձան մարդադավ.
 Թրփուքյունն ու հայուքյուն, զո՛ւր է, պատճառ չե՛ն բնավ...

*) Բեյնեկիլիլ—ինտերնացիոնալ:

**) Իբլիս—սատանա:

Տգիտություն, մոլորանք, դո՛ւք եք առիթն ու պատճառ,
Դուք եք խայռում յերկու լավ ժողովրդին՝ չարաչար:
Պերճախոսներ՝, յեկեք հանդես, յեղբայրության խոսք բող հնչի,
Վոր լինենք հաշտ ու մտերիմ, բշնամությունն անդարձ կորչի՛:

Ժողովրդին ասենք մենք նշմարությունն՝ անվարան,
Բանանք աչքերը նրա, վոր լավն ու վատն իմանա,
Ինչպես արևն է ցրում իր շողերով վոսկեման՝
Ցրենք խավարն անդադար, մինչև անցնի՛, մահանա՛:
Հեռո՛ւ վանենք տխրությունն՝ արյունոտած մեր սրտից,
Բեյնեմիլիելն, ո՛վ Սաբիր, դառնա պայծառ ուղեկից...
Պերճախոսներ՝, յեկեք հանդես, յեղբայրության խոսք բող հնչի,
Վոր լինենք հաշտ ու մտերիմ, բշնամությունն անդարձ կորչի՛:

ՅԵՐԳԵՐ ՀԻՆ ԿԵՆՑԱՂԻ ՄԱՍԻՆ

Գ Ա Ն Գ Ա Տ

Զգիտե՛մ ինչ անեմ, ա՛յ «Մոլլա-Նասրեդին»,
Ինձ տանջում ե իմ կինն,—անհավատի աղջիկը :

Տասնըփ^{ու}նգ, ավելի՛, տասնըյոթ տարի յե,
Վոր իմ տանն ե նստել,—անհավատի աղջիկը :

Յերեֆ-չորս յերեխա յե բերել, պառավել՝
Մի ֆյավթառ ե դառել,—անհավատի աղջիկը :

Յերբ վոր յես ասացի՝ ծերացել ես արդեն,
Հիմի շատ եմ գործերդ,—անհավատի ա՛յ աղջիկ,

Թող առնեմ մի նոր կին, քեֆ անեմ, չոխքեմ,
Վոր քեզ ել ծառայի,—անհավատի ա՛յ աղջիկ,

Այդ որից դարձել ե սա մի շուն մըմուման՝
Ինձ հանգիստ չի՛ տալիս,—անհավատի աղջիկը :

Մի ասող լինի, քե ա՛յ հիմար, քո ի՞նչ գործ,
Ինչո՞ւ յես խառնըվում...—անհավատի ա՛յ աղջիկ :

Լուսացավ՝ վե՛ր կաց դու, հաց քիսի, կով կքի,
Խնոցի շուտ հարի,—անհավատի ա՛յ աղջիկ :

Շոր լվա, բուրդ գգի, քոկ հյուսի, սառ ջուր բեր
Ու քաք քիսի լավ,—անհավատի ա՛յ աղջիկ :

Արքուն կաց, խոնարհ կաց, գործիդ կաց դու միայն,
Տուն մաքրի, աշխատի՛,—անհավատի ա՛յ աղջիկ:

Քո ի՞նչ գործ, քե՛ fո մարդն առնում ե մի նոր կին,
Յեղիր դու հնազանդ,—անհավատի ա՛յ աղջիկ:

Տղամարդն ինձ գիտի, քե՛ fանի՛ կին պետք ե
Նա առնի, կամ քողնի,—անհավատի ա՛յ աղջիկ:

ԹՈՂ ԶԳԱ՛...

— Խանո՛ւմ, բարեկա՛մ դու խանի,
Այդ մարդուն չե՛մ ուզում, քող չգա՛,
Ինձանից դա հեռո՛ւ քող մնա:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ասես մարդ չլինի—
Անհոռնի, այլանդակ, վայրենի,
Ասացե՛ք, այսպես մարդ կլինի՞:
Կեղտոտ ե խոզի պես, քող չգա՛,
Ինձանից դա հեռո՛ւ քող մնա:

Յերբ նշանըս դրիք... լոցի.
Զահել ե ասացիք՝ լոցի.
Մի՞ք ե սա յե՛ յեղել. յե՛տ դարձի...
Փտածին չեմ ուզում, քող չգա՛,
Ինձանից դա հեռո՛ւ քող մնա:

Սարսափից ասես սիրտըս նախեց,
Զգացի, վոր լեզուս պապանձվեց
Յեկ աչքումս ամեն բան խավարեց:
Երվում եմ բոցերում, քող չգա՛,
Ինձանից դա հեռո՛ւ քող մնա:

Մի արշին փափախին նայեք դուք,
Սպիտակ հոնքերին իր փափուկ,
Հորիցս մեծ չե՞ միք ե այս ծերուկ:
Հրե՛շ ե, անամո՛ք, քող չգա՛,
Ինձանից դա հեռո՛ւ քող մնա:

Զգվում եմ հիմա յես դրանից,
Կարի հոտ ե գալիս բերանից,
Վորտեղի՞ց պատահեց այս մարդն ինձ:
Ո՛հ ե սա թունավոր, թող չգա',
Ինձանից դա հեռո՛ւ թող մնա:

ԶԵՄ ՏԱ ՈՒՍՄԱՆ, ԶԵՌՔ ՔԱՇԵՔ

Յերթ իմն ե այս տղան՝ չե՛մ տա ուսման, ձե՛ոք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Թեև այս խեղճ յերեխան սովորելու սեր ունի,
Կարող ե ջանք, նիգ քափել, լինել գիտուն անվանի,
Բայց այդ բոլորը դեմ ե որեքի ե հավատի,
Խիստ վնա՛ս ե կրոնին... չե՛մ տա ուսման, ձե՛ոք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, չե՛մ տա դպրոց, ձե՛ոք փաշեք:

Դեռ մատղաշ ե, լավն ու վատ չի ջոկում նա իրարից,
Զի հասկանում, թե զուր ե ընկնել ուսման յետևից,
Յեվ դժվար ե հավատում ուրիշներին, նաև ինձ.
Փուն կդառնա նրա կյանք, չե՛մ տա ուսման, ձե՛ոք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Ինչքան արցունք ել քափի՝ սիրտս յերբեք չի ցավում,
Թող նա նայի իր դռնի*) մեծ յեղբորը միշտ կյանքում.
Մեռնի նույնիսկ՝ թույլ չե՛մ տա շափկա ծածկի իր որում,
Դառնա հանկարծ անհավատ. չե՛մ տա դպրոց, ձե՛ոք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Թե վոր տղան իմն ե, ի՛մ, ինչացո՛ւ յեք այստեղ դուք,
Զեզ գլխիս տերն ո՞վ կարգեց, վոր հրաման տաք հանդուգն.
Թույլ չե՛մ տա յես կրոնիս ծուռ աչքերով նայեք դուք,
Լավ իմացեք մի խոսքով՝ չե՛մ տա դպրոց, ձե՛ոք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

*) Դռնի—մատուցիչիս, թախանի:

Թողե՛ք, վոր յես իմ տղին ինձ նման ել դարձնեմ,
իմ արհեստը սովրացնեմ, իմ կյանքին հարմարեցնեմ.
Յերեկ մոլլին հարցրի, ասաց. «Ուսման յես դեմ եմ,
Թշնամի յե հավատփին»։ Հե՛մ տա դպրոց, ձե՛ռք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Բավական ե, կորսվե՛ք, հերիք վորքան խաբեցիք,
Հինգ տարի յե կրոնիս հիմքերը դուք խախտում եք,
Իմ սիրելի տղային դուք անհավատ կդարձնեք.
Ձեզ լավ եմ յես հասկացել, Հե՛մ տա ուսման, ձե՛ռք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Իմ խելքը Հե՛մ վաճառի ձեզ նման անհավատին,
Թող դպրոցի փոխարեն տղաս դառնա լոկ բաժին
Գերեզմանի սև հողի. Ի՞նչ անուն տալ դպրոցին.
Խաղատուն ե, խաղալի՛ք. Հե՛մ տա ուսման, ձե՛ռք փաշեք,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, ինձնից հեռո՛ւ մնացեք:

Ձե՛մ լսի յես իզուր տեղ տգետ մարդկանց՝ ձեզ նման,
Ձե՛մ քողնի, վոր իմ տղին քշեք ստի անդաստան,
Դուք քշմամի յեք վաղուց բոլոր մարդկանց մշուսելման,
Ախպեր, գլուխս մի՛ք տանի, Հե՛մ տա ուսման, ձե՛ռք փաշեք,
Խիստ վնաս ե կրոնին, ինձնից հեռո՛ւ մնացեք:

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

— Եյ վա՛խ,
Գլուխ յեկավ ուսուցչական ժողովը,
Նրանք՝ գործի պիտի անցնեն շատ-շուտով:

Յեվ կարծում եմ այս ժողովի ընթացքում՝
Նախորդ հարցը պիտի քննեն յեռանդուն:

Կազմակերպեն պիտի դպրոց իգական,
Բոլոր կանայք լուսավորյալ վոր դառնան:

Իսկ ֆադաֆում՝ հիմեն քարձըր՝ դպրոցներ,
Վոր տղաներն արդեն լինեն ինժեներ:

Համեմատեն հնչյունի հետ մեր գիրը,
Վոր հեշտ կարդան և մանաչեն յերկիրը:

Պիտի կազմեն նոր դասագիրք քուրֆական,
Վոր ամենքը լծվեն գրքին և ուսման:

Կարևոր Հե՛ն բայց հարցերն այս մի փանի,
Ջահաննամը, Ի՛նչ ուզում ե քող լինի...

Վա՛յ, կֆնեն մի ուրիշ հարց կարևոր,
Յեվ կհայտնեն նրանք մտքեր նորանոր:

«Սյունին», «Շիան» կվերացնեն մեջտեղից,
Սուրբ կրոնը վերք կըստանա դրանցից:

Ու կդառնան նրանք յեղբայր սրտագին,
Յեւ համախոհ, և համամիտ, միասին:

Պարզ հիշելով միայն «Իսլամ» անունը՝
Կշարտեն նրանք մի կողմ կրոնը:

ՀԱՐՑ — ՊԱՏԱՍԽԱՆ

Մի՛ տեսնի.—Գլխի՛ս վրա, կփակեմ աչքերս:

Մի՛ խոսի.—Հնազանդ եմ, կարն կկտրեմ խոսքս:

Մի՛ լսի վռչինչ.—Կխցկեմ մառն ականջներս:

Մի՛ ծիծաղի.—Լա՛վ, գիշեր-ցերեկ լաց կլինեմ յես:

Մի՛ հասկանա.—Վո՛չ, չե՛մ կարող յես,

Նման առաջարկ, խնդրում եմ չանե՛ս,

Հնա՞ր ե մի՞թե հրում տապակվել:

Ազատի՛ր դու ինձ, չե՛մ ուզում լսել

Քո այդ խոսքերը այնպես դառնակեզ.

Դու ինձ հանգիստ քող,

Ինչպես մառն քեզ:

ՄԱՄԴԵԼԻՆ*) ՅԵՎ ՀԱՄԻԴԸ

Մ ա մ դ ե ի ի

— Սիրելի՛ հայր իմ սուլթան, դու ի՞նչ կարծիք ունես արդյոք,
Անառակ «մադմագել» մի՛ ինձ գերել ե, խենթացե՛լ եմ.
Շրջելով հագար ֆազաֆ՝ վռաջ Յեվրոպան յես կտրել եմ.
Շան աղջիկն ինձ չի սիրում՝ ինչֆան խնդրել-աղերսել եմ:

Հ ա մ ի դ

— Սիրելի՛դ իմ Մամդելի, իմ հյուսնության սերն ել անցավ.
Լճելով սղոց, կարկին՝ մի ուրի՛շ տուն ուղարկել եմ.
Մեր յերկրում՝ այս ու այնտեղ՝ սուր ժանտախտ կա,
վախենում եմ
Դեղորայք տանըս լցրել՝ այն դեղատուն դարձրել եմ:

*) Մամդելի -- Մահմեդ Ալի շահը:

ԱՌԱԿՆԵՐ ՅԵՎ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՍՔԵՆԴԵՐՆԵ*) ՈՒ ԱՂՔԱՏԸ

Համբի յեզերփին, բարկ արևի տակ,
Մի մարդ եր նստել աղփատ ու տնանկ,
Հանները քափվել խեղճ մարդու վրա՝
Կծոտում էյին մարմինը նրա:
Հանկարծ իսկենդներն անցավ այդ համբով՝
Գոռոզ ու հպարտ իր շփամբով
Յեղ ուզեց գրավ թշվառին մի պահ.
— Ո՛վ աղփատ,—ասաց,—խոսիր դու անահ,
Յեղ խնդրիր այն, ինչ քո սիրտը կուզի,
Քո ցավը պատմիր՝ դարմանեմ հիմի:
— Թագավոր ապրած, շատ եմ խնդրում քեզ,
Վար խիստ հրամանովդ մաններին պատժես,
Աներես եմ շատ, հոգիս հանեցին,
Հանգիստ չե՛մ տալիս ինձ այս ժամերին:
— Բա՛հ, ո՛վ մարդ, խնդրիր դու այնպիսի բան,
Վարն յենքարկվի ինձ, իմ իշխանություն,
Հնար չե յերբեք դրանց յենքարկել
Իմ կամփին հզոր, կամ ուժովս գերել:
— Թագավոր ապրած, մի՞թե այդքան քույլ,
Խեղճ ու անզոր ե քո իշխանություն.
«Խնդրիր այն, ասիր, ինչ սիրտդ կուզի,
Քո ցավը պատմիր՝ դարմանեմ հիմի»,
Մինչդեռ տեսնում եմ, թշվառ ես տկար—
Նույնիսկ մաններին հաղթելու համար:
Յեթե այդքան ուժ անգամ դու չունես՝
Ի՞նչ խնդրեմ քեզնից, ինչպե՞ս ինձ ոգնես...

20 դեկտեմբերի, 1910

*) Ալեքսանդր Մակեդոնացին:

ԾԱՌԵՐԻ ՎԵՃԸ

Կաղնին ու մայրին ու խնձորենին
Յեկան իրար մոտ ու զրույց արին:
Ամենից առաջ՝ կաղնին սկսեց
Գովել հասակն իր, գորությունը մեծ:
— Ձե՛ն հասնի յերբեք լեռներն ինձ,—ասաց,—
Մնում են նրանք իմ կատարից ցած.
Պետք է պարծենան պարտեզներն ինձնով,
Քիչ է մնում, վոր իմ կանաչ գլխով
Հասնեմ յես մինչև յերկինքն անըսովեր՝
Շուրջըս ձգելով ահագին ըստվեր.
Թե հողմը փչի, ջրհեղեղ լինի—
Նրանց ուժն յերբեք ինձ ցած չի՛ բերի.
Իմ արմատները խորն են և ամուր,
Կայծակի հարվածն ել կա՛նցնի իգո՛ւր...
— Դու ունես միայն կաղին անպիտան,
Վոր կեր է դառնում խոզերին միայն,—
Դառնալով ասաց պերն խնձորենին,—
Մինչ յես տալիս եմ պտուղ քանկագին,
Շարում նյուղերիս գեղեցիկ խնձոր՝
Կարմիր քշերով, հոտով, մեղրածոր...
— Հերի՛ք է,—կանչեց մայրին նեղացած,—
Իգուր եք վիճում դուք իրար անցած,
Յերբ ճմեռն հասնի՝ կմերկանաք դուք,
Կլի՛նեք տխուր ու կանաչագուրկ,

Իսկ յես՝ կհագնեմ ատլասի շորեր...
Տալիս եմ մարդկանց յես գերան, սյուներ,
Լուսամուտ ու դուռ, կարասի պես-պես,
Ձմռան ել՝ ուրախ՝ վառարանում յես՝
Ջերմություն, կրակ կընծայեմ նրանց,
Սփռելով շուրջըս խնդությա՛նն անանց:

Մի խումբ ջահելներ՝ ուրախ, անվրդով,
 Յերբ անցնում էյին ճամբի յեզերքով՝
 Տեսան պարտիզում, կանգնած իր բանին,
 Հարյուր տարեկան ծեր պարտիզականին:
 Ծերուկն ուշադիր՝ գետինն եր փորում,
 Ապա դողդոջուն իր ձեռքով առնում
 Խնձորի կորիզ ու մեկիկ-մեկիկ
 Տնկում հողի մեջ՝ խորն ու հանդարտիկ:
 Ժպտացին նրանք ու հարցում արին.
 — Ի՞նչ ես անում դու, ծերո՛ւկ դու բարի,
 Զե՞ք վոր դարձել ես հարյուր տարեկան:
 — Աշխատում եմ յես, վորդիք պատվական,
 Ու տնկում ահա կորիզ խնձորի,
 Վոր ծլի, բոյ տա այն յեկող տարի:
 — Ի՞նչ շահ դրանից, յերբ այսօր դու կաս,
 Բայց վաղը, մեկ ել հանկարծ դու չկաս,
 Իսկ քո տնկածը յե՞րբ պիտի բուսնի.
 Թե՛ վոր բուսնի ել՝ դու ել չե՛ս լինի.
 Մի՛ տաճիկի իգուր որերով այդպես,
 Դրանց պտուղից բաժին չկա՛ քեզ:
 — Հույսով, սիրով եմ ցանել մեր նախնիք,
 Պտուղ եւ ավել ամեն մի հատիկ,
 Այդ պտուղները՝ հասուն, քաղցրահամ,
 Յերբ վոր ուտում ենք՝ մենք ամեն անգամ
 Բարի՛ ենք հիշում անունը նրանց,
 Վորոնք քրտինք են քափել վաստակած,
 Յանում ենք հիմի նորերի համար,
 Վոր մե՛զ ել հիշեն նրանք անդադար:

Գողը Նասրեդու գլխարկն առնելով՝
 Փախավ մի այգի շտապ փայլերով.
 Սակայն Նասրեդինն անհոգ, անվարան՝
 Գորշ ճամբան բռնեց գերեզմանատան:
 Յերբ մարդիկ տեսան, վոր խեղճ Նասրեդինն
 Կանգնել ե այնտեղ ձեռները կրծքին,
 «Ինչո՞ւ յես յեկել այստեղ սպասում» —
 Հարցրին նրան: Իսկ նա՛ անհուզում
 Պատասխան տվեց. «Գլխարկըս քոցրեց
 Մի գող և ինձ առանց գլխարկի քողեց»:
 «Գողը, — ասացին, — մտավ այգին այն,
 Ինչո՞ւ յես կանգնել այստեղ դու ունայն
 Յե՛վ կորցրնում ես գուր տեղ ժամանակ,
 Մի՛ լինի անփույթ, գնա՛ դու շիտակ
 Դեպի այգին այդ և գտիր գողին,
 Վոր տեր դառնաս դու քո լավ գլխարկին»:
 — Իմ ի՞նչ գործ, յեղբայր, այգին վո՛րտեղ ե,
 Վերջին պայանը նրա՛ այստե՛ղ ե...

ԲԺԻՇԿՆ ՈՒ ՀԻՎԱՆԴԸ

Մի հիվանդ՝ շտապ դիմելով բժշկին
Ասաց. «Ստամոքսըս խիստ ցավում է,
Մի դեղ տուր, դարմա՛ն արա իմ ցավին,
Մեռնում եմ, կարծես ներսըս այրո՛ւմ եմ»:
Նրա բազկերակն խկույն բռնելով՝
Բժիշկն հարցրեց. «Ի՞նչ ես կերել դու»:
«Միայն այրված հաց,—ասաց անվրդով,—
Յեվ ուրիշ վնչինչ, հարգելի դոկտոր»:
Զարմացած բժիշկն ուզեց մի դեղով
Դարմանել նրա աչքերը միայն:
«Իմ ստամո՛քսն է այրվում ցավով,
Հարգելի դոկտոր, դարմանի՛ր դու այն»:
«Յեթե քո աչքը արատ չունենար՝
Զեյիլ ուտի դու այրված սև հաց,
Այդպե՛ս, իհարկե՛... իմ հիվանդ տխմար.
Հենց դրա համար քույլ տուր, վոր հիմա
Մի դեղ կաթեցնեմ քո աչքի մեջ յես,
Վոր սրանից վերջ դու գգո՛ւյշ լինես»:

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՅԵՎ ՀԵՂԵՂԸ

Գյուղացու մեկը՝ մի գովեշ ուներ.
Զուր էր խառնում նա կաթի հետ—կեղծում.
Տեղացին մի որ առատ անձրևներ՝
Առնելով յերկիրն իրենց ջրերում,
Գովշին ել տարավ հեղեղը վարար.
Վողբաց գյուղացի՛ն և տխրեց անչափ:
— Ինչո՞ւ յես լալիս, վողբում անդադար,—
Ասաց տղան իր,—գիտե՞ս, հայրիկ ջան,
Կաթի հետ խառնած ջրերը առատ՝
Դարձան ծով հեղեղ, քչելով տարան
Մեր լավ գովեշին՝ մեզ քողին անկաթ:
Սակայն չկարծես, քե իջավ վերից
Տիրոջ պատիժը քո գլխին հանկարծ,
Պատիժ ստացար դու սխալ գործից—
Կեղծեցիր կաթը՝ փուն շահով տարված:

ՄԱՅՐԵՐԻ ԶԱՐԴԸ

Գոհարն ու վռակին, գոշուխտը շողուն՝
Զնչին զարդեր եմ մայրերի համար.
Ուրի՛շ մեծ զարդով, անունով փայլուն
Պետք է պարծենան նրանք անդադար:
Ուսումով, կրթված վարդին է լավ զարդ
Մայրերի համար և վո՛չ ուրիշ բան,
Նրանցո՛վ պետք է լինեն միշտ հպարտ,
Յե՛վ փայլեն, ինչպես արե՛վն է գարնան:

ՏՂԱՆ ՅԵՎ ՍԱՌՈՒՅՅԸ

Դպրոցի համբին՝ մի տղա
Սառույցի վրայով սղդաց.
Բայց ընկավ նա յերեսնիվայր,
Պատահում է, ի՞նչ իմանար...
Յերբ վեր կուցավ՝ խիստ վշտացած՝
Նա սառույցին այսպես ասաց.
— Սառույց, գիտե՞ս, վատն ես դու,
Վտանգում ես դու մարդու,
Սակայն կարն է կյանքդ հիմի.
Շուտով գարուն կլինի,
Հալչելով ջուր կդառնաս,
Վոր մեծ գետի՛ն միանաս:

ԳԱՐՆԱՆ ՈՐԵՐԸ

Յեկե՛՛ֆ, գարնան ջինջ որեր,
Տարվա անո՛ւշ, լա՛վ որեր,
Սարում, ձորում, պարտիզում՝
Հալեցրե՛՛ք ձյունը խփում:
Գետերը թռչ վարարեն,
Արտաները դալարեն.
Մի՛ն ցորենը թե՛լ-թե՛լ,
Ծաղկե՛՛ն ծառերն ու վարդեր,
Տերևները կանաչեն,
Յե՛վ աղբյուրները հնչե՛՛ն:



<< Ազգային գրադարան



NL0376366

9122 / n. 50 4.

1-2

8217

М. А. Сабур

стихи

ТШЗ ССР Армении 1936